

ՀՏԴ : 781(479.25) +929:781(479.25) Կոմիտաս+929:891.981Արփիարյան
DOI <https://doi.org/10.52853/25792830-2021.1-9>

**ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ԴԵՐԸ
ԿՈՄԻՏԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐՈՒՄ**

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ*

Կոմիտասի մասին առաջին տպագրված հոդվածի հեղինակն է հայ գրող, հրապարակախոս և գրաքննադատ Արփիար Արփիարյանը (1851-1908): 1892թ. հոկտեմբերի վերջերին Կ. Պոլսում Ա. Արփիարյանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել նրա և Կոմիտասի հանդիպումը, որը կարևոր դեր ունեցավ ինչպես կոմիտասագիտության մեջ, այնպես էլ Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում: Հանդիպման տպավորության տակ «Հայրենիք» օրաթերթի 1892թ. նոյեմբերի 21-ի համարում տպագրվում է Ա. Արփիարյանի «Սողոմոն Սարկաազ» հոդվածը: Արփիարյանն առաջիններից էր, ով ըստ արժանվույն գնահատեց ու արժևորեց երիտասարդ Սողոմոնի կատարած աշխատանքը: Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթի 1894 թվականի 896, 897 և 922 համարներում արտատպվել է «Արարատ» ամսագրի 1894 թվականի հուլիս և օգոստոս ամիսների է. և Ը. համարներում տպագրված Սողոմոն Սողոմոնյանի «Հայոց եկեղեցական եղանակները» վերնագրով հոդվածը, որը կարևոր դեր ունեցավ հայ երաժշտական միջնադարագիտության ձևավորման գործում: Փաստորեն՝ Ա. Արփիարյանը նպաստեց Կոմիտասի երաժշտագիտական գործունեության լուսաբանմանը նրա հայրենիքում: Այս հոդվածը, մեր կարծիքով, խթան դարձավ, որպեսզի 1910 թվականին Կոմիտասը տեղափոխվի ոչ թե Թիֆլիս կամ Փարիզ, այլ՝ Կ. Պոլիս, որտեղ էլ ծավալվեց նրա բեղմնավոր ու արդյունաշատ գործունեության վերջին արարը:

Քանալի բառեր – Արփիար Արփիարյան, Կոմիտաս, Կոստանդնուպոլիս, «Հայրենիք» օրաթերթ, «Սողոմոն Սարկաազ» հոդվածը, Հրազդան:

Ներածություն

Քչերին է հայտնի, որ Կոմիտասի մասին առաջին հրապարակման հեղինակն է հայ գրող, հրապարակախոս և գրաքննադատ Արփիար Արփիարյանը (1851-1908): Սույն փաստը, ցավոք, վրիպել է հայ կոմիտասագետ-երաժշտագետների ուշադրությունից:

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, Երաժշտության բաժնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, annaasatryan2013@gmail.com, հոդվածի ներկայացման օրը՝ 05.02.2021, գրախոսման օրը՝ 16.03.2021, տպագրության ընդունման օրը՝ 23.03.2021:

Խոսքը «Սողոմոն Սարկալազ» հոդվածի մասին է, որը հայտնաբերել և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել ՀԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի, ապա՝ սփյուռքահայ արվեստի բաժինների վարիչ, արվեստագիտության դոկտոր, թատերագետ Գառնիկ Ստեփանյանը՝ «Պատմաբանասիրական հանդեսի» 1969 թ. 3-րդ համարում տպագրված «Կոմիտասը Կոստանդնուպոլսում» հոդվածում¹, իսկ մինչ այդ՝ իր «Արփիար Արփիարյան» աշխատության մեջ²: Այդ հոդվածի մասին հիշատակվում է նաև Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրության մեջ, որը կազմել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Խաչիկ Սամվելյանը:

Մեր նպատակն է հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ անդրադառնալ Արփիար Արփիարյանի և Կոմիտասի հանդիպմանը, որը տեղի է ունեցել 1892 թ. հոկտեմբերի վերջերին Կ. Պոլսում, բացահայտել այդ հանդիպման տպավորության տակ ծնված և «Հայրենիք» օրաթերթի նույն թվականի նոյեմբերի 21-ի համարում տպագրված Արփիարյանի «Սողոմոն Սարկալազ» հոդվածի նշանակությունը կոմիտասագիտության մեջ, ներկայացնել Արփիար Արփիարյանի դերը Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում:

Սարկալազ Սողոմոն Սողոմոնյանի և Արփիար Արփիարյանի հանդիպումը Կ. Պոլսում

Այսպես՝ 1892 թ. մայիսի վերջին Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան, 1890 թ. հունիսի 9-ին սարկալազ ձեռնադրված Սողոմոն Սողոմոնյանը, 11-ամյա բացակայությունից հետո այցելում է Կուտինա՝ իր ծննդավայրը, լինում Ազգային վարժարանում, որտեղ սովորել էր 1876-1880 թվականներին: Իր ծննդավայրում Սողոմոնն օգոստոսին հավաքում է և գրի առնում 15 հոգևոր երգեր: Մայիս-հոկտեմբեր ամիսներին ծայնագրում է ինչպես իր ծնողների, այնպես էլ ուրիշների հորինած շուրջ 60 թուրքերեն երգեր, որոնք նրա համար երգում են ազգականներն ու համագյուղացիները:

1892 թ. հոկտեմբերի վերջին Քյոթահիայից Վաղարշապատ մեկնելու ճանապարհին Սողոմոն Սողոմոնյանն այցելում է Կ. Պոլիս: Ի դեպ՝ Սողոմոնի այցելությունը Կ. Պոլիս զարմանալի հետաքրքրություն է առաջացնում պոլսահայ մտավորականության շրջանում:

«Ի՞նչն է գրավել մարդկանց, այն էլ եվրոպական գրականության, արվեստի քաջաձանոթ այդ խմբագիրներին: Չէ՞ որ այցելուն սովորական մի սարկալազ էր, անփորձ, դեռևս աշակերտի վիճակում:

Բայց խմբագիրները ցանկացել են հարց և զրույց ունենալ նրա հետ, հաշվի չառնելով անգամ քաղաքական խստությունները, երբ մեծ համարձակություն էր Ռուսաստանից եկած կամ այնտեղ մեկնող մարդկանց հետ տեսնվելը: Քաղաքական այդ սարսափի հետևանքով էր, որ նախորդ տարի ռուսական դեսպանատան հովանավորությունը վայելող Պ. Ադամյանի թաղմանը ներկա չէր եղել արևմտահայ ռեալիստական արձակի ներկայացուցիչ-

¹ Ստեփանյան Գ., Կոմիտասը Կոստանդնուպոլսում, «Պատմաբանասիրական հանդես», 1969, № 3, էջ 97-98:

² Ստեփանյան Գ., Արփիար Արփիարյան, Երևան, 1955, էջ 145:

ներից ոչ մեկը, ո՛չ Ա. Արփիարյանը, ո՛չ Գր. Զոհրապը, ո՛չ Լ. Բաշալյանը, ո՛չ Ե. Օտյանը, որոնք բոլորն էլ այժմ համախմբված էին «Հայրենիք» օրաթերթի շուրջը»³:

Ինչպես հետագայում կխոստովանի Ա. Արփիարյանը՝ «Սողոմոն սարկալազի գալուստը երբ իմացանք, ուզեցինք հետը տեսնուիլ»⁴: Եվ ահավասիկ՝ Արփիար Արփիարյանի հրավերով Սողոմոնը հյուրընկալվում է «Հայրենիք» օրաթերթի խմբագրատանը: Տեղի է ունենում բավական տևական զրույց, որի տպավորության տակ ծնվում է և «Հայրենիք» օրաթերթի նոյեմբերի 21-ի 309-րդ համարում, Սողոմոնի՝ արդեն Վաղարշապատ վերադառնալուց հետո, տպագրվում է Ա. Արփիարյանի «Սողոմոն Սարկալազ» խորագրով հոդվածը՝ Հրազդան ստորագրությամբ⁵: Ինչպես հայտնի է, Ա. Արփիարյանը հանդես է եկել նաև «Հրազդան», «Սկեպտիկ», «Հրպետ» և այլ կեղծանուններով:

Ա. Արփիարյանի «Սողոմոն Սարկալազ» խորագրով հոդվածը՝ Հրազդան ստորագրությամբ

Ներկայացնելով 23-ամյա սարկավազին՝ Արփիարյանը գրում է. «Քեթահեացի մըն էր, որ ինը տարի առաջ պատանեակ գնացած էր իբր ուսանող Գէորգեան ճեմարանը, եւ առողջութիւնը դարմանելու համար վերջերս եկաւ իր հայրենիքն ու նորէն վերադարձաւ Մայր Աթոռ»:

Սողոմոն սարկալազի գալուստը երբ իմացանք, ուզեցինք հետը տեսնուիլ: Պօլսէն մեկնած օրը մեզ այցելութեան եկաւ: Այդ նիհար ու հիւանդադէմ երիտասարդը թէպէտեւ Քեթահեացի բայց Կովկաս կրթուելով բռնուած էր մասնագիտութեան ախտէն: Հին երգերու հետքերը գտնել, նախնիքներու բանաստեղծութիւնները հաւաքել ոչ թէ միայն խօսքերովն այլ եղանակներովը, նորերն ալ անոնց մէջ խառնել ու տոհմային ժողովրդական երգերու հաւաքածոյ մը մեզ տալ, ահա ինչ որ այդ երիտասարդ սարկալազը իրեն կէտ նպատակի դրած էր»⁶:

Միևնույն ժամանակ Արփիարյանը գրում է, թե «Բաւական տեսնուեցայ հետը, եւ շիտակը խոստովանելու համար, կ'ենթադրեմ թէ շատ շահեկան խօսքեր ըսավ ինձի, բայց ես շատ բան հասկնալու կարողութենէն զուրկ էի»⁷:

Այնուհետև նա ներկայացնում է Սողոմոն սարկալազի կատարած գործը՝ միաժամանակ հայտնելով իր զարմանքը: «Սարկալազը բաւական պրպտած է, Արարատեան նահանգի Արարատեան գաւառը, Շիրակ գաւառը, Սուրմալու գաւառը, Ապարանի գաւառը: Ե՛րբ և ի՞նչպէս. չեմ գիտեր, իրողութիւնն այս է թէ ասոնցմէ հաւաքած է մօտաւորապէս 200 երգ, խօսքն ու եղանակը միասին»⁸:

³ Ստեփանյան Գ., նշվ. հոդվ., էջ 98:

⁴ Հրազդան, Սողոմոն սարկալազ, «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, թիւ 309, 21 նոյեմբերի, էջ 1:

⁵ Նույն տեղում, էջ 1-2:

⁶ Նույն տեղում, էջ 1:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 2:

Արփիարյանն ընթերցողին տեղեկացնում է, որ ժողովրդական երգերի բանաստեղծական տեքստերի և մեղեդիների գրառմանը զուգահեռ՝ Սողոմոն սարկավարը «Հաաքած է հին նօթաներու, խազերու բաական քանակութիւն մը, եւ եղանակներու շատ մը անուններ: Մենէ շատերուն համար հաւանօրէն նորութիւն մըն է գիտնալ թէ ի՞նչպէս կը կոչուին եղանակներու հայկական անունները: Սողոմոն սարկաւագ գտած է 128 եղանակներու անուններ որք կարծեմ թէ մեծ մասով նորութիւն են: Ահա այդ անուններէ մի քանին.

Տաւա տապալ
Կատուն
Կոզեռն
Աազերեցն
Կարմիր վանեցին
Սարկաւագն... »⁹:

Ապա Արփիարյանը Սողոմոնին խնդրում է երգել «մին այդ տեղական երգերէն»¹⁰: Նա երգում է միտքն եկած առաջին երգը՝ «Տըւել եմ կելնեմ սարը»:

Ենթադրում ենք, որ երգի կոմիտասյան կատարումը խոր տպավորություն է թողել Արփիարյանի վրա, և նա հողվածում զետեղել է երգի բանաստեղծական տեքստը.

«Տըւել եմ կ'ելնեմ սարը
Հապր պան օ՛յ, օ՛յ
Չը գտայ ֆիտան եարը»
Հապր պան օ՛յ, օ՛յ
Ապարանը քարոտ է ա
Հապր պան օ՛յ, օ՛յ
Քարի տակն արօտ ա
Հապր պան օ՛յ, օ՛յ...»¹¹

Եզրափակելով իր հողվածը՝ Արփիարյանը գրում է. «Չեմ կարծեր որ համարուի շատ գեղեցիկ նմոշ մը տեղական երգերու, բայց ինչպէս որ է դարձեալ ունի իր քաղցրութիւնը: Եղանակը տխուր բան մը ունի իր մէջ, թէւ կ'ենթադրեմ թէ զուարթութեան համար յօրինուած ըլլայ, բայց արեւելեան եղանակներու մէջ զուարթութեան ու տխրութեան սահմանները ճիշդ չեն գծուած»¹²:

Այս հանդիպումից հետո Կոմիտասը հեռացել է Կ. Պոլսից, և պոլսեցիները շուրջ քսան տարի որևէ տեղեկություն չեն ունեցել Կոմիտասի մասին:

Սակայն շնորհիվ «Հայրենիք» օրաթերթի՝ պոլսեցիները հնարավորություն ունեցան որոշակի տեղեկություններ ստանել Կոմիտասի երաժշտագի-

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

տական գործունեության մասին: Բանն այն է, որ 1894 թվականի 896, 897 և 922 համարներում «Հայրենիքն» արտատպում է «Արարատ» ամսագրի 1894 թվականի հուլիս և օգոստոս ամիսների է. և Ը. համարներում տպագրված՝ Սողոմոն Սողոմոնյանի «Հայոց եկեղեցական եղանակները» վերնագրով հոդվածը, որը կարևոր դեր ունեցավ հայ երաժշտական միջնադարագիտության ձևավորման գործում:

Կոմիտասը Կ. Պոլիս վերադարձավ 1910 թվականին: Ա. Արփիարյանը հեռացել էր կյանքից 1908-ին:

Ինչպես հայտնի է, 1909 թ. Կոմիտասը որոշում է էջմիածնից հեռանալ. Նա կանգնում է ոչ դյուրին ընտրության առջև. ու՞ր տեղափոխվել՝ Պոլիս, թե՞ Թիֆլիս: Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը նրան հրավիրում էր Թիֆլիս՝ որպես Ներսիսյան դպրոցի երաժշտության ուսուցիչ և քաղաքի ավագ եկեղեցու դպրապետ: Իսկ Կոմիտասի ճեմարանական դասընկեր Կարապետ Պարտիզպանյանը նրան հրավիրում էր Պոլիս՝ հայտնելով. «...նպաստավոր պայմաններ պիտի գտնե հոն իր բոլոր աշխատանքներուն համար և խոստանալով իր և իր ընկերներուն բովանդակ աջակցությունը»¹³:

Այս առիթով Կոմիտասը խորհրդակցում է Արշակ Չոպանյանի հետ. «Երկուքն ո՞րը նախընտրել, կը վարանէր որոշում տալ, եւ ինծի խորհուրդ կը հարցնէր: Մղեցի զինքը Պոլիսը նախընտրել: Գեղարուեստական գործունեութեան համար լայն ասպարէզ կար այդ միջոցին Պոլիս, նոր ըեժիմը գրաքննութիւնը ջնջած էր, երթեւեկի ազատութիւնը տուած էր, Պոլսոյ եւ Թրքա-հայաստանի միջեւ հաղորդակցութիւնները դիւրացած էին, Պոլսոյ մեր մեծ համայնքին մէջ հայ մտաւոր եւ ազգային կեանքի վերազարթնում մը սկսած էր, Կոմիտաս հոն պիտի լիովին ըմբռնուէր, խրախուսուէր եւ օժանդակուէր իր գործը լայնօրէն կատարելու: Լսեց անգամ մը եւս իմ բարեկամական խորհուրդիս ու գնաց Պոլիս: Թէ ինչ հրաշալի գործ կատարեց հոն, թէ ինչպէս հայ եւ օտար հասարակութիւնները հոն գնահատեցին զինքը, յայտնի է ամենուն: Բայց եկաւ մեծ պատերազմը եւ պատահեցան այն դէպքերը որ իր ուղեղը ցնցեցին եւ զինք դրին այն ցաւագին կացութեան մէջ ուր կմնայ մինչեւ ցարդ...»¹⁴:

Մեր կարծիքով Կ. Պոլիսն ընտրելու Ա. Չոպանյանի խորհուրդը համընկավ Կոմիտասի ցանկության հետ: Թեև Կոմիտասն ուներ Թիֆլիսի հետ կապված վառ հուշեր, սակայն, ամենայն հավանականությամբ, դեռ թարմ էին թիֆլիսյան «Տարագ» շաբաթաթերթում տպագրված չարաբաստիկ հոդվածի մասին հիշողությունները: Բանն այն է, որ 1891 թվականի մարտին՝ որպես Վաղարշապատի «Արարատ» ամսագրի հավելված, տպագրվել էր Գևորգյան ճեմարանի Ա. լսարանի ուսանող Սողոմոն Սողոմոնյանի «Ազգային օրհներգ» խմբերգը՝ քառաձայն երկսեռ խմբի համար՝ հայկական նոտագրությամբ, որի տեքստի հեղինակն էր Գ. լսարանի ուսանող Արշակ Թաշչյանը: Սա Կոմիտասի առաջին ստեղծագործություններից մեկն էր՝ 22-ամյա Սողոմոնի տպագրված առաջին գործը: Շուտով Թիֆլիսի «Տարագ»

¹³ Հ.Ճ.Սիրունի, Կոմիտասին հետ, «Էջմիածին», 1965, №10, էջ 23:

¹⁴ Չոպանյան Ա., Կոմիտաս վարդապետ եւ հայ երաժշտութիւնը, «Անահիտ», 1931, թիւ 1-2, էջ 120:

շաբաթաթերթի ապրիլի 21-ի համարում «երաժշտութիւն» խորագրի տակ տպագրվում է այդ խմբերգի վերաբերյալ քննադատական անստորագիր հոդված, որտեղ մասնավորապես նշվում է. ««Արարատ» ամսագրի վերջին համարի հետ իբր յաւելւած ուղարկւած է «ազգային օրհներգ» անունով մի հայկական ծայնագրութեամբ երգ: Այդ երգը ինքն ըստ ինքեան մի շատ անհամ եղանակ է, սակայն զարմանում ենք, թէ ինչպէս, մի մարդ, առանց ուսումնասիրելու երաժշտութիւնը, առանց հասկանալու թէ կոմպոզիտորութեան համար պէտք է սովորած լինել ծայնական երաժշտութեան բոլոր կանոնները, թոյլ է տալիս իրան չորս ծայնով մի խմբերգ յօրինել, յետոյ ծայները զիլ, բարձր, սոսկ, բամբ անուններով բաժանել, առանց պահպանելու ամենաչնչին կանոնն անգամ»: Ամենասուր քննադատության ենթարկելուց հետո պասկվիլի անանուն հեղինակը, որն անգամ չէր կարողացել ճիշտ կարդալ նոր հայկական ծայնագրությամբ գրված ծայնանիշերը, հոդվածն ավարտում է հետևյալ թունոտ գնահատականով. «Դեռ չենք ասում և այն, որ չորս ծայնով այդ երգը երբ երգի, ուրիշ ոչինչ չի լսել նրանից, եթէ ոչ չորս գիւղական տիրացուների խլացուցիչ ու այլազան միասին երգւած մի երգ, որն ոչինչ ներդաշնակութիւն չունի իր մէջ»¹⁵:

Բնականաբար հոդվածի հեղինակը չէր էլ կարող երևակայել, որ ինքը հանիրաժի փորձում է սովեր գցել հայ ազգային դասական կոմպոզիտորական դպրոցի ապագա հիմնադրի անվան վրա, ով իր նախորդների նվաճումների և համաշխարհային հարուստ փորձի օգտագործման ճանապարհով պիտի ստեղծեր հայ երաժշտության ազգային ոճը՝ խարսխված հայ ժողովրդական երգի վրա: Անգրագիտության մեջ էր մեղադրում երիտասարդի, ով հետագայում պիտի բազմաձայներ հայ ժողովրդական երգն ու հոգևոր եղանակները՝ ստեղծելով ազգային բազմաձայնությունը (պոլիֆոնիան):

Սակայն հոդվածագիրն իր չար գործը ինչ-որ չափով կատարեց: Միգուցե այս հոդվածն էր պատճառը, որ հետագայում՝ իր ստեղծագործական կյանքի ընթացքում, Կոմիտասը գրեց հատուկենտ ինքնուրույն ստեղծագործություններ: Միգուցե իր անդրանիկ երկի նկատմամբ այս չարամիտ վերաբերմունքն առաջ բերեց թերահավատություն սեփական կոմպոզիտորական տաղանդի հանդեպ: Մինչդեռ Կոմիտասի ինքնուրույն ստեղծագործությունները նշանակալի են և արժեքավոր: Բավական է նշել դրանցից երկուսը՝ մենակատարի և մանկական խմբի համար հանրահայտ «Կաքավի երգը»՝ գրված Հովհաննես Թումանյանի «Կաքավի գովքը» բանաստեղծության խոսքերով, որը հրատարակվեց Թիֆլիսում՝ որպես «Հասկեր» մանկական ամսագրի՝ 1908 թվականի ապրիլյան համարի հավելված, և «Գարուն» («Նոր գարուն») քառաձայն խմբերգը՝ Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծության հիման վրա, որը մնաց «որպես գեղեցիկ և հուզական մի ստեղծագործություն, որը պատանեկան անմիջականությամբ և խորացված արտահայտությամբ հաղորդում է բանաստեղծական տեքստի հայրենասիրական

¹⁵ Երաժշտութիւն, «Տարագ», Թիֆլիս, 1891, № 15, 21 ապրիլի, էջ 226:

բովանդակությունը»¹⁶: Երևի թե դա էր նաև պատճառներից մեկը, որ «Անուշ» օպերան այդպես էլ մնաց անավարտ...

Եվ այդուամենայնիվ՝ 1895-ին «Արարատ» ամսագիրը որպես հավելված տպագրեց Սողոմոն Սողոմոնյանի ևս մեկ «Ազգային օրհներգ»՝ կրկին Արշակ Թաշճյանի խոսքերով, որը, ի հեճուկս թիֆլիսյան անանուն հոդվածագրի, լայնորեն տարածվեց Էջմիածնում և մինչ օրս երգվում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում:

Արդյո՞ք կարող էր մոռանալ Կոմիտասը, որ իր գործունեության վերաբերյալ առաջին անաչառ հոդվածը տպագրվել էր հենց Կ. Պոլսում, «Հայրենիք» օրաթերթի 1892 թ. նոյեմբերի 21-ի 309-րդ համարում, Ա. Արփիարյանի հեղինակությամբ, «Սողոմոն սարկաւագ» խորագրով, Հրազդան ստորագրությամբ:

Եզրակացություն

- Ա. Արփիարյանի և Կոմիտասի՝ 1892 թ. հոկտեմբերի վերջին Կ. Պոլսում տեղի ունեցած հանդիպումը կարևոր դեր ունեցավ ինչպես կոմիտասագիտության մեջ, այնպես էլ Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում:
- Արփիարյանն առաջիններից էր, ով ըստ արժանվույն գնահատեց ու ըստ էության արժևորեց երիտասարդ Սողոմոնի կատարած աշխատանքը:
- «Հայրենիք» օրաթերթի 1892 թ. նոյեմբերի 21-ի 309-րդ համարում տպագրված՝ Ա. Արփիարյանի «Սողոմոն Սարկաւագ» խորագրով հոդվածը, ըստ էության, Կոմիտասի և նրա կատարած գործի մասին առաջին տպագիր անդրադարձն է: Իհարկե, հետագայում եղան բազմաթիվ հրապարակումներ, հրատարակվեցին գիտական ուսումնասիրություններ, որոնց ամբողջությունը ձևավորեց ու զարգացրեց հայ երաժշտագիտության կարևորագույն ուղղություններից մեկը՝ կոմիտասագիտությունը, որի ակունքներում, փաստորեն, կանգնած էին պոլսեցիներ Արփիար Արփիարյանը, իսկ հետագայում՝ Արշակ Չոպանյանը...
- Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթի 1894 թվականի 896, 897 և 922 համարներում արտատպվել է «Արարատ» ամսագրի 1894 թվականի հուլիս և օգոստոս ամիսների Է. և Ը. համարներում տպագրված՝ Սողոմոն Սողոմոնյանի «Հայոց եկեղեցական եղանակները» վերնագրով հոդվածը: Փաստորեն՝ Արփիարյանի շնորհիվ Կոմիտասի երաժշտագիտական ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվեցին նաև նրա հայրենիքում:
- Ա. Արփիարյանի «Սողոմոն Սարկաւագ» հոդվածը, մեր կարծիքով, որոշիչ նշանակություն ունեցավ, որպեսզի 1910 թվականին Կոմիտասը տեղափոխվի ոչ թե Թիֆլիս կամ Փարիզ, այլ՝ Կ. Պոլիս, որտեղ էլ

¹⁶ **Աթայան Ռ.**, Ծանոթագրություններ, Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1965, էջ 279:

ծավալվեց նրա բեղմնավոր ու արդյունաշատ գործունեության վերջին արարը:

РОЛЬ АРПИАРА АРПИАРЯНА В ТВОРЧЕСКОЙ СУДЬБЕ КОМИТАСА

АННА АСАТРЯН

Автором первой напечатанной в прессе статьи о Комитасе был армянский писатель, публицист и литературный критик Арпиар Арпиарян (1851-1908). В Константинополе в конце октября 1892 г. по инициативе А. Арпиаряна состоялась его встреча с Комитасом, сыгравшая заметную роль как в комитасоведении, так и в творческой судьбе Комитаса. Впечатления о встрече А. Арпиарян изложил в статье «Согомон Саркаваг [Дьякон]», опубликованной в номере за 21 ноября 1892 г. редактируемой им газеты «Айреник». А. Арпиарян был одним из первых, кто по достоинству оценил важность выполненной молодым Согомоном работы. Константинопольская газета «Айреник» в номерах 896, 897 и 922 за 1894 год перепечатала из июльского и августовского (7-го и 8-го) номеров за тот же год издававшегося в Эчмиадзине журнала «Арарат» статью Согомона Согомоняна «Армянские церковные мелодии», ставшую важной вехой в формировании армянской музыкальной медиевистики. Тем самым А. Арпиарян способствовал освещению музыковедческой деятельности Комитаса на его родине. По нашему мнению, статья «Согомон Саркаваг [Дьякон]» послужила толчком к тому, что в 1910 году Комитас переехал не в Тифлис или Париж, а в Константинополь, где и развивалось действие последнего акта его плодотворной профессиональной деятельности.

Ключевые слова – Арпиар Арпиарян, Комитас, Константинополь, газета «Айреник», статья «Согомон Саркаваг [Дьякон]», Раздан.

THE ROLE OF ARPIAR ARPIARYAN IN THE CREATIVE LIFE OF KOMITAS

ANNA ASATRYAN

The author of the first article in the press about Komitas was an Armenian writer, publicist and literary critic Arpiar Arpiaryan (1851-1908).

In Constantinople, at the end of October 1892, A. Arpiaryan arranged a meeting with Komitas, which played a noticeable part both in Komitas Studies and in Komitas' creative life.

His impressions of the meeting A. Arpiaryan presented in the article "Sarkavag [Deacon] Soghomon" in the November 21, 1892 issue of the "Hayreniq" newspaper, whose editor-in-chief he was. A. Arpiaryan was among the first to commend the importance of work, carried out by young Soghomon.

The “Hayreniq” newspaper of Constantinople, in issues 896,897 and 922 of the year 1894, reprinted from the July and August issues (7 and 8, 1894) of the “Ararat” monthly, published in Ejmiatzin, Sghomon Sghomonyan’s article “Armenian Church Tunes”, which had become a major milestone in the formation of Armenian musical medievistics. Thereby, A. Arpiaryan contributed to the elucidation of Komitas’ activity as a musicologist in his home country.

In our opinion, the mentioned article had triggered Komitas’ decision to move, instead of Tiflis or Paris, to Constantinople, where the final act of his fruitful professional work was to develop.

Key words – Arpiar Arpiaryan, Komitas, Constantinople, the “Hayreniq” newspaper, the article “Sarkavag [Deacon] Sghomon”, Hrazdan.